

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ - ՍԵՂՄԱԳԻՐ

ՀՀ ԿԱ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(մամուլին և զանգվածային լրատվամիջոցներին տրամադրելու համար)

ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N122-Ն որոշմամբ (ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N1105-Ն որոշման խմբագրությամբ) հաստատված՝ ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների ցանկում՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) մասով, նախատեսված է եղել **4 միջոցառում** (110-113-րդ կետեր) և **8 գերակա խնդիր** (96-103-րդ կետեր):

Միջոցառումների ծրագրով նախատեսված է 4 իրավական ակտի նախագծի ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ: Դրանք վերաբերում են՝

1. ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության միջոցառումների հաստատմանը,

2. Հայաստանի Հանրապետությունում կիսակառույցների շինարարության ավարտման և հետագա օգտագործման ծրագրին հավանություն տալուն,

3. Աղետի գոտու քաղաքային բնակավայրերի ոչ հիմնական շինությունների փաստագրման և դրանց հաջորդաբար հեռացման քայլերի հստակեցման, ինչպես նաև որպես ոչ հիմնական շինություն համարակալված, սակայն քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխանող շինությունների օրինականացման համար նախադրյալների ստեղծման նպատակով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի N317 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելուն,

4. Համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի վերանայմանը (ընթացակարգերի օպտիմալացման, անարդյունավետ գրագրության կրճատման, փաստաթղթերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջների հստակեցման նպատակով):

Նախագծերը սահմանված ժամկետներում ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ, դրանցից 2-ն (1-ին և 4-րդ կետեր) արդեն ընդունվել են ՀՀ կառավարության կողմից, իսկ 2-ը (2-րդ և 3-րդ կետեր)՝ գտնվում են վերջնական լրամշակման փուլում:

Գերակա խնդիրների ցանկում Կոմիտեի մասով ներառված խնդիրներն են՝

1. Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի (շինարարական նորմեր, կանոնների հավաքածուներ, ստանդարտներ, կարգեր, կանոններ) մշակում, վերանայում, տեղայնացում,

2. համայնքներում քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բազայի համալրում, մինչև 2021 թվականի հունվարի 1-ը հանրապետության բոլոր համայնքներին ապահովում քաղաքաշինական ծրագրային (համակցված) փաստաթղթերով,

3. շինարարական աշխատանքների գնագոյացման մեթոդաբանության արդիականացում և շինարարական արտադրանքի արժեքի հաշվարկման սկզբունքների ձևավորում,

4. կառուցապատման ներդրումային ծրագրերի մշակում,

5. կառուցապատման ընթացակարգերի պարզեցման շարունակական իրականացում,

6. բազմաբնակարան բնակարանային ֆոնդի պահպանմանն ու շահագործմանը վերաբերող խնդիրների կանոնակարգում,

7. նախագծային և շինարարական աշխատանքների որակի բարձրացման նպատակով աջակցություն նոր տեխնոլոգիաների մշակմանն ու ներդրման գործընթացներին,

8. հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման և ազգային անվտանգության ապահովման նպատակով շենքերի և շինությունների սեյսմիկ ռիսկի նվազեցում, ինչպես նաև դրանց սեյսմակայունության և հուսալիության բարձրացում:

Թվարկված գերակա խնդիրների և դրանց լուծմանն ուղղված քայլերի մասով աշխատանքներն իրականացվել են 2017 թվականի համար նախատեսված ամբողջ ծավալով: